ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 նոյեմբերի 2025 թվականի N 1538 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱ-ԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 1392-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության խթանման ծրագրերը հաստատելու մասին» N 1392-Լ որոշման N 4 հավելվածով հաստատված «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների ծրագրում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 19-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «(առաջին և երկրորդ փուլերի աշխատանքների կատարմանը համապատասխան)» բառերը.

2) 21-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Վարկերի տրամադրումը պետք է իրականացվի փուլային եղանակով՝ ըստ ավարտական 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերում իրականացված ծախսերի, որոնց

վերաբերյալ դրույթները պետք է սահմանվեն ֆինանսական կառույցի և ԳՖԿ-ի հետ կնքվող պայմանագրում:».

3) 24-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում «20-րդ կետի» բառերը փոխարինել «15-րդ կետի» բառերով.

4) 25-րդ կետը «տոհմային կենդանիներ» բառերից հետո լրացնել «(կովեր, երինջներ, 14-17 ամսական էգ մատղաշ)» բառերով.

5) 27-րդ կետի 1-ին ենթակետում՝

ա. «գ» պարբերությունը «պատճենը,» բառից հետո լրացնել «իսկ վերակառուցման դեպքում՝ նաև վերակառուցվող շինության սեփականության իրավունքի վկայականի պատճենը,» բառերով,

բ. «զ» պարբերությունը «ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից զեկույց» բառերից հետո լրացնել «, որը տրամադրված լինի նախարարություն դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ» բառերով,

գ. «է» պարբերությունում «տեղեկանք» բառից հետո «.» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և լրացնել «որը տրամադրված լինի նախարարություն դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ» բառերով,

դ. ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ը», «թ» և «ժ» պարբերություններով.

«ը. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հողամասի միասնական տեղեկանք (հողամասի նկատմամբ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն),

թ. հայտարարություն ծանուցումներն ստանալու նախընտրելի եղանակի վերաբերյալ,

ժ. համաձայնագիր՝ շահառուին առնչվող ամբողջ տեղեկատվությունը, այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող, այլ պետական մարմիններին իրենց լիազորությունների շրջանակում օգտագործելու նպատակով փոխանցելու մասին.».

6) 27-րդ կետի 2-րդ ենթակետը 2-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում ներկայացնել մասնակցության նոր դիմում՝ կցելով սույն կետի 1-ին ենթակետով պահանջվող բոլոր փաստաթղթերը։».

7) 27-րդ կետի 6-րդ ենթակետում՝

ա. «մեկ տարվա ընթացքում» բառերից հետո լրացնել «էլեկտրոնային դիմումով» բառերով,

բ. «ա» պարբերությունը «թույլտվություն,» բառից հետո լրացնել «իսկ վերակառուցման դեպքում՝ վերակառուցման թույլտվություն,» բառերով,

գ. ուժը կորցրած ճանաչել «բ» պարբերությունը.

8) 27-րդ կետի 8-րդ ենթակետում՝

ա. «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. պայմանագիրը կնքելու պահից անասնաշենքն առավելագույնը երկու տարվա ընթացքում շահագործման հանձնելու և տվյալ մոդելի համար սահմանված անասնագլխաքանակի 90%-ի առկայության ապահովում (նշված ժամանակահատվածում արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում նախարարության համաձայնությամբ անասնաշենքի շահագործման հանձնելու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկ տարով),»,

բ. «գ» պարբերությունում «հինգ տարի նպատակային օգտագործելու» բառերը փոխարինել «երեք տարի նպատակային օգտագործելու (տվյալ մոդելի համար սահմանված անասնագլխաքանակի առնվազն 90%-ի ապահովում,)» բառերով, իսկ «դ» պարբերությունում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով,

գ. «է» պարբերության վերջում «.» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով,

դ. ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ը» պարբերությամբ.

«ը. մոնիթորինգների իրականացմանը շահառուի կողմից չխոչընդոտելու և համապատասխան պայմաններ ապահովելու.».

9) 27-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) մինչև փոխհատուցում ստանալը շահառուն պետք է նախարարություն ներկայացնի էլեկտրոնային դիմում կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա. 1-ին փուլի համար՝ շինարարության ավարտական ակտ (շահագործման թույլտվություն), շինարարական կապալառու կազմակերպության հետ կնքված պայմանագրի և կապալառու կազմակերպության լիցենզիայի պատճեններ, անշարժ գույքի նկատմամբ օտարման սահմանափակման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք,

բ. 2-րդ փուլի համար՝ անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման համար ձեռք բերված և տեղադրված նոր, չօգտագործված սարքեր, որոնք կունենան համապատասխան փաստաթղթեր (հաշվարկային փաստաթուղթ՝ հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր), շահառուի անվամբ համայնքում կենդանիների հաշվառման մասին տեղեկանք (կենդանիների նույնականացման համարներով) և կենդանիների տոհմային քարտերը,

գ. 3-րդ փուլի համար՝ շահառուի անվամբ համայնքում կենդանիների հաշվառման մասին տեղեկանք (կենդանիների նույնականացման համարներով) և կենդանիների տոհմային քարտերը.».

10) 27-րդ կետի 11-րդ ենթակետի «բ» պարբերությունը «ապահովելուց» բառից հետո լրացնել «(սարքերը տեղադրված և մոնտաժված)» բառերով.

11) 27-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-րդ ենթակետով.

«11.1) սույն կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված փոխհատուցումն ստանալուց հետո «բ» պարբերության պահանջը չապահովելու դեպքում փոխհատուցված գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի N 283-Ն որոշումը, իսկ «ա» և «բ» պարբերություններով սահմանված փոխհատուցումն ստանալուց հետո «գ» կետը չապահովելու դեպքում փոխհատուցում չի տրամադրվում և կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի N 283-Ն որոշումը՝ «ա» և «բ» պարբերություններով սահմանված փոխհատուցման գումարների վերադարձ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,».

12) 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31. 3-րդ փուլի փոխհատուցումն ստանալուն հաջորդող 3 տարիների ընթացքում իրականացվում է ամենամյա մոնիթորինգ։».

13) «ԱՆԿԱՊ ԲՈՔՍԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔՈՎ ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ ՏԵԽՆՈԼՈ-ԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԵՐԸ» N 3 աղյուսակի «1-ին մոդելի համար անհրաժեշտ քանակը» սյունակում «0» թիվը փոխարինել «1» թվով, իսկ «Անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման համար անհրաժեշտ սարքերը» սյունակում «Կթի ստացիոնար» բառերից հետո լրացնել «կամ շարժական» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ